ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/06

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.01.2021թ. թիվ 26/26-1/275-2021 գրությամբ «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ Արարատի մարզի Ավշարի համայնքապետարանի 29.12.2020թ. թիվ 201-Ե գրության հիման վրա 14.01.2021թ. թիվ 26/26-1/275-2021 գրությամբ նախաձեռնել է «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 18.01.2021թ. թիվ 05-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի հուլիսի 2-ին ՀՀ Արարատի մարզի Ավշարի համայնքապետարանի կողմից կազմակերպվել է N «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/5» ծածկագրով պետական գնման մրցույթ: «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ն եղել է միակ մասնակիցը և հաղթել է՝ ապահովելով որակավորման և պայմանագրի ապահովումները: Այնուհետև հուլիսի 13-ին Ավշարի համայնքապետարանի հետ կնքվել է N «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/5» ծածկագրով պայմանագիրը՝ նոր մանկապարտեզի կառուցման նախագծերը մշակելու համար:

Համաձայն տեխնիկական բնութագրի պետք էր մշակել նոր մանկապարտեզ վեց խմբի համար (150 երեխա), մեկ հարկանի, 2030մ^2 մակերեսով և մասնակի նկուղային մասով: Առանձին մշակել կաթսայատուն և պահակատուն:

Նախագծի բոլոր մասերը մշակվել են համապատասխան ՀՀ-ում գործող նորմերի և կանոնների:

Գրեթե ամեն շաբաթ հանդիպել ենք համայնքի ղեկավարության հետ, քննարկել նախագծային լուծումները, տեխնիկական առաջադրանքին համապատասխան ներկայացվող պահանջները: Ընթացքում մանկապարտեզի նախագծային լուծումները համաձայնացվել են ՀՀ Առողջապահության և աշխատանքի տեսչության, Քաղաքաշինության, տեխնիկական և հակահրդեհային անվտանգության տեսչության հետ, կաթսայատունը անցել է տեխնիկական անվտանգության փորձաքննություն: Այնուհետև, Ավշարի մշակույթի տանը կազմակերպվել է բնապահպանական առաջին լսումները, որին մասնակցում են համայնքի, բնապահպանության և նախագծային կազմակերպության ներկայացուցիչները: Նախագծային փաթեթի համար կազմվել է նախահաշիվ, որը կազմում է 642 671.3 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով 2020թ. օգոստոս ամսվա ֆինանսների նախարարության ինֆորմացիոն տեղեկագիրքը: Վերը նշված նախահաշվային գնի մեջ մտնում են՝ մանկապարտեզի շենքը իր ներքին և արտաքին կոմմունիկացիաներով, ինժեներական ենթակառուցվածքներով, պահակատան նախահաշիվը, կաթսայատան նախահաշիվը և տարածքի ցանկապատման և բարեկարգման նախահաշիվը:

Սեպտեմբերի 25-ին՝ հիմք ընդունելով պայամանգրի 7.7 կետը պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մեկ ամսով: Հոկտեմբերի 28-ին՝ համաձայնագրի ժամկետի վերջի օրը,

ամբողջ նախագծային փաթեթը հանձման-ընդունման ակտի հետ միասին առձեռն փորձել ենք հանձնել Ավշարի համայնքապետարան: Համայնքապետարանում մեզ հայտնեցին, որ չեն ընդունում փաթեթը՝ առանց հիմնավորման: Մենք պահանջել ենք այդ դեպքում գրավոր ներկայացրեք մերժումը, հրաժարվել են և նամակը մուտք չեն արել: Ստիպված նույն օրը ամբողջ փաթեթը և հանձնման-ընդունման օրինակները ուղղարկվել է փոստով:

Հայտնում եմ Ձեզ, որ Ավշարի փոստային բաժանմունքը երկու անգամ փորձել է Ավշարի համայքապետարանին տրամադրել նախագծային փաթեթը և հանձման-ընդունման արձանագրությունը, երկու անգամ էլ բանավոր կերպով հրաժարվել է ընդունել առաքանիները: Այնուհետև, ըստ օրենքի մեկ ամիս պահելուց հետո, փոստային բաժանմունքը առաքանին 28.11. 2020թ. ետ է ուղարկել մեզ՝ որպես չպահանջված:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ պատվիրատուն չի պատասխանում անգամ գրություններին: Այսպիսով պատվիրատուն չի կատարում պայմանագրի 3-րդ կետով նախատեսված պահանջները, իսկ քաղաքաշինական պարզ փորձաքննությունը համաձայն պայմանագրի՝ Հավելված N 1 տեխնիկական բնութագրի, պետք է կատարի պատվիրատուն՝ նախագծերը ընդունելուց հետո:

Համայնքապետարանը չի ստանում նախագծային փաթեթը, որից հետո միայն հնարավոր կլինի կատարել պայմանագրով նախատեսված հետագա փուլերը:

Ելնելով Ավշարի համայնքապետարանի Ձեզ հասցեագրված N 26/26-1/275-2021 14.01.2021թ. գրությունից հայտնում եմ մեր դիրքորոշումը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հաշվի առնելով կից ներկայացված ապացույցները, իսկ ս.թ. 22.01.2021թ. նիստի ժամանակ կներկայացնեմ նախագծանախահաշվային ամբողջ փաթեթը, որը ժամկետը լրանալուն պես վերադարձվել է փոստով: Հույս ունեմ, որ հարցին արդարացի լուծում կտաք»:

«Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/06 ընթացակարգի շրջանակներում 22.01.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ Արարատի մարզի Ավշարի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Արարատի մարզի Ավշարի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.12.2020թ. թիվ 201-Ե գրությամբ հայտնել

է հետևյալը.

«Ավշարի համայնքապետարանի, որպես Պատվիրատուի և «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ի, որպես Կատարողի (միասին նաև կողմեր), միջև 13.07.2020թ. կնքվել է Ավշար համայնքի կարիքների համար Ավշար համայնքի նոր կառուցվող մանկապարտեզի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման գնման թիվ «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/5» պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Պատվիրատուի հանձնարարությամբ Կատարողը հանձնել է Ավշար համայնքի նոր կառուցվելիք մանկապարտեզի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման պարտավորությունը, համաձայն՝ պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

Ծառայությունը մատուցվում է պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետում:

25.09.2020թ. Պատվիրատուի և կատարողի միջև կնքվել է համաձայնագիր, որի համաձայն՝ Կատարողի կողմից ծառայության մատուցման ժամկետը երկարացվել է մինչև 28.10.2020թ.:

Պայմանագրի 3/1 կետի համաձայն՝ մատուցված ծառայությունն ընդունված է համարվում Պատվիրատուի և կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Տվյալ դեպքում Պայմանագրով նախատեսված կարգով, մինչ օրս Կատարողի կողմից Պատվիրատուին չի ներկայացվել Ավշար համայնքի նոր կառուցվելիք մանկապարտեզի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

Ղեկավարվելով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետով պատվիրատուն միակողմ լուծել է վերոնշյալ պայմանագիրը:

Սույնով խնդրում ենք «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Այնուհետև Պատվիրատուն ՍՑ-ՆԳ-2021/06 ընթացակարգի շրջանակներում 19.01.2021թ. ներկայացրել է հետևյալ գրավոր դիրքորոշումը.

«Սույնով հայտնում ենք, որ «Ավշար համայնքապետարանի», որպես Պատվիրատուի և «ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերության, որպես Կատարողի (միասին նաև Կողմեր), միջև 13.07.2020 թվականին կնքվել է «Ավշար համայնքի կարիքների համար Ավշար համայնքի նոր կառուցվող մանկապարտեզի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման գնման թիվ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/5» պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Պատվիրատուի հանձնարարությամբ Կատարողը ստանձնել է Ավշար համայնքի նոր կառուցվելիք մանկապարտեզի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման պարտավորությունը, համաձայն՝ Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

Ծառայությունը մատուցվում է պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետում:

25.09.2020 թվականին Պատվիրատուի և Կատարողի միջև կնքվել է համաձայնագիր, որի համաձայն՝ Կատարողի կողմից ծառայության մատուցման ժամկետը երկարացվել է մինչև 28.10.2020 թվականը:

Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ մատուցված ծառայությունն ընդունված է համարվում Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Տվյալ դեպքում Պայմանագրով նախատեսված կարգով, մինչ օրս Կատարողի կողմից Պավիրատուին չի ներկայացվել Ավշար համայնքի նոր կառուցվելիք մանկապարտեզի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

02.11.2020 թվականին Ավշար համայնքը գրություն է ուղարկել «ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերությանը և հորդորել՝ «Պայմանագրով նախատեսված կարգով, առաջիկա օրերին Պատվիրատուին ներկայացնել Ավշար համայնքի նոր կառուցվելիք մանկապարտեզի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, ինչը հնարավորություն կտա Կողմերիս շարունակել հետագա փոխհամագործակցությունը՝ նպատակ ունենալով ապահովել Ավշար համայնքի նոր կառուցվող մանկապարտեզի կառուցումը, որն ունի հանրային շահի նպատակ»:

Վերը նշված գրությանը «ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերությունը մինչ օրս որևէ պատասխան չի ներկայացրել, ինչն իրավացիորեն կասկած է հարուցում վերջինիս գործողությունների իրավաչափության նկատմամբ:

Վերոգրյալի ուժով անհրաժեշտ է արձանագրել, որ «ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերությունը խախտել է 13.07.2020 թվականին կնքված՝ «Ավշար համայնքի կարիքների համար Ավշար համայնքի նոր կառուցվող մանկապարտեզի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման գնման թիվ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/5» պայմանագրի էական պայմանները, ուստի և պետք է կրի այն չկատարելու համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բացասական հետևանքները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/06 ընթացակարգի շրջանակներում 22.01.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4 <u>ՍՑ-ՆԳ-2021/06 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/06 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Արարատի մարզի Ավշարի համայնքապետարանի և «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ի միջև 13.07.2020թ. կնքվել է թիվ «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/5» ծածկագրով Ավշար համայնքի կարիքների համար Ավշար համայնքի նոր կառուցվող մանկապարտեզի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ավշար համայնքի նոր կառուցվող մանկապարտեզի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 11.01.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

3. ՀՀ Արարատի մարզի Ավշարի համայնքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 29.12.2020թ. թիվ 201-Ե գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.01.2021թ. թիվ 26/26-1/275-2021 գրությունը, ՀՀ Արարատի մարզի Ավշարի համայնքապետարանի 29.12.2020թ. թիվ 201-Ե գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ Արարատի մարզի Ավշարի համայնքապետարանի և «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ի միջև 13.07.2020թ. կնքվել է թիվ «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/5» ծածկագրով Ավշար համայնքի կարիքների համար Ավշար համայնքի նոր կառուցվող մանկապարտեզի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ավշար համայնքի նոր կառուցվող մանկապարտեզի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) ***<u>11.01.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>***

ՀՀ Արարատի մարզի Ավշարի համայնքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, ***<u>Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 29.12.2020թ. թիվ 201-Ե գրությամբ:</u>***

Այսպիսով՝ Պայմանագրերի 7-րդ կետի 7.10-րդ ենթակետի համաձայն՝ կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը***: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ <u>ծանուցումը</u>, սույն կետով սահմանված <u>հրապարակվելուն հաջորդող օրվանից</u>:***

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: ***Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:*** Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ արձանագրում եմ, որ «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից, երբ Պայմանագիրը կնքած անձը համարվել է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, այսինքն՝ 12.01.2021թ.-ից: Սակայն Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, թիվ ***201-Ե*** գրությամբ ուղարկել է լիազորված մարմնին ***29.12.2020թ.***, վերջինս էլ նախաձեռնել է «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ՝ առանց իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ի հայտ եկած հիմքի:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել նաև հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման

գործընթացի մասնակիցների գործողությունների հաջորդականությունը՝ հստակ ժամկետներով:

Ընդ որում՝ համապատասխան ընթացակարգային ժամկետի սահմանումը չի կարող ինքնանպատակ լինել. տվյալ ընթացակարգային ժամկետի սկիզբը իրավաստեղծ մարմինը կապել է որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հետ, և հետևաբար ցանկացած ընթացակարգ, որը կնախաձեռնվի դեռևս տվյալ ընթացակարգային ժամկետի հոսքը պայմանավորող փաստի ի հայտ չեկած լինելու պայմաններում, ինքնին կազդի ամբողջ ընթացակարգի իրավաչափության վրա՝ անկախ այն հանգամանքից, թե հետագայում ընթացակարգը նախաձեռնելուց հետո ինչպիսի հանգամանքներ կարող են ի հայտ գալ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վերոնշյալ իրավակարգավորման համատեքստում, ինչպես նաև անդրադառնալով Կարգի 45-րդ կետով և 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված ընթացակարգային ժամկետի պահպանման և ժամկետի հոսքի սկիզբը ճիշտ հաշվարկելու իրավաստեղծ մարմնի նպատակին՝ պետք է արձանագրել, որ այն չի կարող ինքնանպատակ լինել, քանի որ ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, ում հետ կնքված պայմանագրի լուծման հետևանքով պայմանագրի մյուս կողմը հիմքերը կարող է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար, ունի լեգիտիմ ակնկալիք առ այն, որ այդպիսի գործընթաց չի նախաձեռնվի իր նկատմամբ այնքան ժամանակ, քանի դեռ ինքը պատշաճ չի ծանուցվել պայմանագրի միակողմանի լուծման մասին:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի

կարող վրա հասնել և հանգեցնել «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.01.2021թ. թիվ 26/26-1/275-2021 գրությամբ «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**